ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» դեկտեմբերի 2023թ. Հր. 3502-Ա
ք. Երևան

«ԻՄՊՈՐՏ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2024 թվականի կարիքների համար Համակարգչային տեխնիկայի և կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Իմպորտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ 02302642, գործունեության հասցե՝ Ք.Երևան,Շարուրի փ. 25շ. 38) (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2023 թվականի դեկտեմբերի 25-ի ներկայացված հայտում 1-4-րդ չափաբաժիններիի (սեղանի համակարգիչներ, համակարգչի էկրան/մոնիտոր, տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, դյուրակիր համակարգիչ) մասով հրավերի պահանջների նկատմամբ առկա են եղել անհամապատասխանություններ: Ընկերության կողմից խախտվել է հրավերի 2.1-րդ կետով սահմանված պահանջները՝ մասնավորապես հայտով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացված էին հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի պահանջի խախտմամբ, ինչպես նաև հայտում բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 41-րդ կետի, հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ծանուցման արդյունքում Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 42-րդ կետի դրույթները՝ «Իմպորտ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Համապատասխանում է բնօրինակին,
Անձնակազմի կառավարման վարչության
Խորհրդական, վարչության պետի
պարտականությունները կատարող Մ. Մարտիկյան